ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

MEGERIAN CARPET ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ՅԱՍՄԻԿ ՍԱՅԱԴԵԱՆ
hasmik.sayadyan93@gmail.com

Երեւանի նորագոյն պատմամշակութային կենտրոններից է «Մեգերեան Կարպետ»ը, որտեղ կարելի է տեսնել հայկական մշակոյթի իւրօրինակ դրսեւորում հանդիսացող աւանդական գորգագործութեան պահպանման, վերածաղկումին եւ վերստին տարածման սատարող օրինակելի ու ամբողջական ծրագրի յատկանշական մի գործընթաց:

Այն լոկ գորգերի արտադրութեամբ զբաղուող ընկերութիւն չէ, այլ նաեւ մշակութային կենտրոն, որտեղ ցուցադրուած հարուստ նմուշները այցելուին կը ներկայացնեն հայ գորգագործութեան հարուստ աւանդոյթներն ու բազմադարեան պատմութիւնը: Ընկերութեան հիմնադիր Ռաֆֆի Մեգերեանը իր բազմամեայ փորձառութեամբ հաւաստում է, որ հայկական գորգերն աշխարհի տարբեր երկրներում մեծ պահանջարկ ունեն: Հայկական գորգերն արտադրւում են Հայաստանում, բայց հիմնական սպառողը արտերկիրն է: Ըստ նրա, գորգագործութիւնը ազգային ինքնութիւն ունեցող, ազգային ինքնութեան սատարող մշակութային գլխաւոր նմուշ է:

ՄԵԳԵՐԵԱՆՆԵՐԸ

Մեգերեանների ընտանիքը, աւելի քան չորս սերունդ, զբաղւում է ընդհանրապէս հին գորգերի վերականգնմամբ եւ նոր գորգերի արտադրութեամբ: 1917ին Մեգերեանները գաղթել են ԱՄՆ, Արեւմտեան Հայաստանի Զոմախլու գիւղից եւ Նիւ Եորքում հիմնել Մեգերեան Կարպետ (Megerian carpet) ընկերութիւնը, որը սկզբում զբաղուել է հին գորգերի վերանորոգմամբ եւ լուացմամբ, ինչպէս նաեւ առեւտրով:

1990ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումից ետք, ընկերութիւնը եկաւ Հայաստան՝ նպատակ ունենալով զարկ տալ հայկական գորգարուեստին, վերականգնել հայ գորգարուեստի աւանդոյթները, աշխատատեղեր ստեղծել հայ գորգագործ վարպետների, հայ գորգարուեստի վտանգուած մշակոյթը ամրացնել, վերաթարմացնել, պահպանել եւ

մեծաքանակ հայկական գորգ արտադրել ու մատակարարել համաշխարհային շուկայի: 2002ին Մեգերեան ընտանիքը գնում է սովետահայ շրջանի նշանաւոր «Հայգորգ» միաւորումը, որտեղ խորհրդային տարիներին արտադրւում էին տարատեսակ հայկական ձեռագործ գորգեր: Այդ գորգերը, սակայն քիմիական ներկանիւթերով եւ պարսկական մէկուկէս հանգոյցի եղանակով էին պատրաստւում: Ընկերութիւնը փոխեց ՀՀ գորգարտադրութեան ամբողջ արհեստագիտութիւնը եւ այն ուղղորդեց աւանդական հայկականին. վերականգնելով հին հայկական արհեստագիտութեամբ գորգ գործելու շատ հմտութիւններ: Այս աւանդոյթը Մեգերեանների ընտանիքում փոխանցուել է սերնդէսերունդ: Յիրաւի, ընկերութիւնը Երեւան հաստատուելու օրից բրդի ներկման խնդրում հրաժարուեց նախապէս օգտագործուող քիմիական ներկանիւթերից եւ փոխարէնը օգտագործեց ու զարգացրեց բրդի ներկման բնական ներկանիւթեր, որոնք ստանում է Հայկական Լեռնաշխարհի ծաղիկներից, արմատներից ու բոյսերից, այնպէս, ինչպէս դա արւում էր հազարամեակներ առաջ: Միաժամանակ, ընկերութիւնը կիրառեց հայկական հին կրկնակի հանգոյցը, ստեղծելով ձեռագործ գորգերի արտադրութեան գործընթացում վաղեմութեան սկզբունքը: Այսպիսով վերականգնուեցին հայ գորգագործութեան աւանդոյթները, նոր թափ հաղորդուեց հայկական ձեռագործ գորգի արտադրութեանը եւ զարգացմանը:

Մեգերեանները բացեցին 25 մասնաճիւղ ՀՀ տարբեր շրջաններում:

Բացի Հայաստանից ընկերութիւնը 2020ականներից արտադրամասեր ունի նաեւ Եգիպտոսում, Պակիստանում, Աֆղանստանում, Հնդկաստանում, Չինաստանում եւ Ռումինիայում, իսկ գորգի վաճառքի ցուցասրահներ՝ ԱՄՆում (Նիւ Եորքի 5րդ պողոտայ) եւ Երեւանում:

«Մեգերեան Կարպետ» ընկերութիւնը Երեւանում ունի նաեւ «Յովհաննէս եւ Նոյեմի Մեգերեաններ»ի անուան ընդարձակ ցուցասրահ-թանգարանը, որտեղ կազմակերպւում են շրջայցեր ինչպէս տեղացիների, այնպէս էլ զբօսաշրջիկների համար: Ցուցասրահ-թանգարանում ներկայացուած են աւելի քան հարիւրամեայ շուրջ միքանի տասնեակ հայկական գորգեր: Ցուցասրահի կողքին գործում է գորգագործական արտադրամաս, որտեղ աշխատում են գորգագործները:

«ՄԵԳԵՐԵԱՆ ԿԱՐՊԵՏ»Ի ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՒՈՐՆԵՐԻ ՑԱՆՑԸ ՀՀՈՒՄ

Հայաստանեան մասնաճիւղերում գորգագործներն աշխատում են հայկական կրկնակի հանոգոյցով եւ բնական ներկանիւթերով: Արդէն իսկ պատրաստի ներկուած թէլերը երեւանեան մասնաճիւղերից տեղափոխւում են մարզերի մասնաճիւղեր: Արտադրամասերում գործում են միայն գորգեր եւ ոչ՝ կարպետներ: Արցախում Մեգերեան Կարպետի մասնաճիւղ չի գործել:

Մեգերեան Կարպետ ընկերութիւնը գործում է տարբեր չափերի գորգեր: Ամենափոքր գորգերն են՝ 40x40 սմ., իսկ ամենամեծը գտնւում է ՀՀ նախագահական նստավայրում, ունի 17 մետր երկարութիւն եւ 5.80 մետր լայնութիւն, գոյացնելով շուրջ 100 մետր քառակուսի մակերես:

Այստեղ վերականգնւում են հին հայկական գորգերի գործածութիւնից դուրս մղուած զարդանախշեր: Այժմ ընկերութիւնը գործում է աշխարհի ամենահին գորգի՝ Պազիրիկի (Pazyryk) վերարտադրուած տարբերակը, նաեւ վերականգնում է հին վիշապագորգերը, խաչխորան գորգերը, Գոհար գորգը եւն.:

Գործւում են միջին խտութիւնից մինչեւ բարձր խտութիւն ունեցող գորգեր, որոնք արտադրւում են ԱՄՆ, Եւրոպա, Արաբական եւ Հիւսիսային պետութիւններ (Դանիա, Շուեդիա, Նորուեգիա, Ֆինլանդա, Իսլանդա): Ընդհանրապէս, դեռ հին ժամանակներում, հին հայկական գորգերում մէկ մետր քառակուսում եղել է 160,000 հանգոյց: Ընկերութիւնը պահպանել է այդ աւանդոյթը:

2003-ին ընկերութիւնը արտադրել է տարեկան միջին հաշուով 25,000 մետր քառակուսի հայկական գորգ: 2008ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով կտրուկ անկում է ապրել արտադրութիւնը, երբ ՀՀ քսան արտադրամասերից շարունակել են աշխատել միայն երկուսը: 2010-20ին արտադրութեան քանակը կրկին աճել է՝ հասնելով տարեկան 12,000 մետր քառակուսու: Իհարկէ 2020ի համավարակը չէր կարող չանդրադառնալ նաեւ գորգերի արտադրութեան վրայ: Ժամանակաւորապէս փակուեցին մասնաճիւղերը, իսկ արտադրութիւնը հասաւ նուազագոյնի: 2024ից վերաբացուել են արդէն միքանի մասնաճիւղեր եւ աստիճանաբար արտադրութեան քանակն էլ մեծանում է:

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ «ՄԵԳԵՐԵԱՆ ԿԱՐՊԵՏ»Ի ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԷՋԵՐԻՑ

Հայաստանի մանուկների ձեռքով պատրաստած յոբելենական գորգի ցուցադրութիւն-վաճառքը Նիւ Եորքում

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) եւ «Մեգերեան Կարպետ» ընկերութիւնը 2017ին իրագործեցին բարեգործական ծրագիր՝ նուիրուած Մեգերեան ընկերութեան 100ամեայ յոբելեանին: Ընկերութեան հմուտ գորգագործների օգնութեամբ Հայաստանի մանուկներ հիմնադրամի շահառու Վանանդ համայնքի մանուկները, միքանի ամիս աշխատել են յոբելենական գորգի ստեղծման

վրայ: Գորգը ցուցադրուել է ԱՄՆում՝ Նիւ Եորքում անցկացուող COAFի ամէնամեայ դրամահաւաք-երեկոյի ընթացքում: Այն վաճառուել է բարեգործական միջոցառման աճուրդի ժամանակ, ու հասոյթը ամբողջովին ծառայել Հայաստանի մանուկներ հիմնադրամի ծրագրերին:

Երեւան քաղաքին նուիրած 17րդ դարի հայկական վիշապագորգի խճանկարը, Կարապի լճի մերձակայքում

Այլ իրագործում էր Մեգերեան ընտանիքի Երեւան քաղաքին նուիրած ԺԷ. դարի հայկական վիշապագորգի խճանկարը, որը 2017ին տեղադրուեց Կարապի լճի մերձակայքում: Այս խճանկարում արտացոլուած է Լոնդոնի «Վիկտորիա եւ Ալբերտ» թանգարանում գտնուող ԺԷ. դարի հայկական վիշապագորգը: Խճանկարը պատրաստուել է շուրջ 900 հազար կտոր տարբեր տեսակի (մարմար, գրանիտ, ազուրիտ, տուֆ-աւազաքար) քարերից:

Յուշագիր Հայաստանի պատմութեան թանգարանի հետ

Ընկերութեան բարեգործական ձեռնարկներից էր նաեւ Հայաստանի պատմութեան թանգարանի հետ կնքուած յուշագիրը 2023ին, որի արդիւնքում Հայաստանի պատմութեան թանգարանում կտրուեց «Աստղահաւք» գորգը: Այն գործել էր «Մեգերեան Կարպետ մշակութային համալիր»ի մէկ գորգագործուհի՝ Հայաստանի պատմութեան թանգարանի ցուցասրահներից մէկում: Գորգը դեռեւս չի վաճառուել: Այն պէտք է աճուրդով վաճառուի եւ ստացուած գումարով Հայաստանի պատմութեան թանգարանը հին գորգ է գնելու եւ հարստացնելու իր հաւաքածուն:

Գորգ Երեւան քաղաքի 2800ամեակին առթիւ

Մեգերեան ընտանիքի արժէքաւոր եւ գեղեցիկ նուէրներից մէկը եղաւ Երեւան քաղաքի 2800 ամեակին առթիւ գործուած գորգը, 2018ին: Գորգն ունի 7 մետր երկարութիւն եւ 3,5 մետր լայնութիւն: Դրանում պատկերուած են Պատմական Հայաստանի մայրաքաղաքները՝ Վան, Արմաւիր, Երուանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դուին, Բագարան, Շիրակաւան, Կարս, Անի, Երեւան, Արգիշտի արքան, Երեւանի ճարտարապետ՝ Ալեքսանդր Թամանեանը, Էրեբունիի ծննդեան վկայական հանդիսացող սեպագիր արձանագրութիւնը: Ներկայիս այն գտնւում է Երեւանի պատմութեան թանգարանի մուտքին:

Զինծառայողների ապահովագրութեան հիմնադրամի եւ «Մեգերեան Կարպետ»ի նախաձեռնութիւնը

2021ին գործուել է «Ջրաբերդ» գորգը Մարիոթ հիւրանոցում՝ ինը ամիս տեւողութեամբ: Հայաստան եկած բազում հիւրեր, պատուիրակութեան անդամներ, յայտնի մարդիկ, *շոու բիզնէս*ի ներկայացուցիչներ իրենց մասնակցութիւնն ունեցան գորգի ստեղծման գործում: Իւրաքանչիւրը գործում էր մէկ հանգոյց, որի համար հարկաւոր էր վճարել 1000 ՀՀ դրամ: Հաւաքուած ամբողջ գումարը՝ աւելի քան 8 մլն. դրամ, ընկերութիւնը փոխանցել է 1000+1 բարեգործական հիմնադ-

ռամին, որը զբաղւում է մահացած զինուորների ընտանիքներին, ինչպէս նաեւ հաշմանդամ զինուորներին նիւթական օժանդակութեամբ:

Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարին նուիրուած Պազիրիկը եւ Վիշապագորգը գեղեցկացնում եւ ամբողջական են դարձնում եկեղեցու յարդարանքն ու միջավայրը

Կարեւոր իրադարձութիւն էր, երբ Ռաֆֆի եւ Թորոս Մեգերեանները երկու գորգ նուիրեցին Երուսաղէմի գլխաւոր սրբավայրերից մէկին՝ Ս. Յարութեան տաճարին: Իրականացաւ նրանց ուխտը՝ յիշատակ ունենալ քրիստոնէական ամենանուիրեալ եւ գլխաւոր սրբատեղիում: Առաջին գորգը հայկական ամենայայտնի եւ գեղեցիկ գորգերից «Վիշապագորգ»ն է, իսկ երկրորդը աշխարհի ամենահին գորգի՝ Պազիրիկի, վերարտադրուած տարբերակը: Մեգերեան Վիշապագորգը զարդարում է նաեւ Ս. Ղազարի մայրավանքի եկեղեցին:

«Գանձասար» գորգն օրհնուեց եւ նուիրուեց Գանձասար վանքին

Ընկերութիւնը գորգեր է գործել նաեւ Արցախի եկեղեցիների համար: Մասնաւորապես «Գանձասար» գորգն ունի 8.5 մետր երկարութիւն եւ 5 մետր լայնութիւն: Գորգում առկայ բոլոր պատկերները վերցուած են Գանձասարի եկեղեցու պատերի եւ դռների զարդանախշերից:

23 Հոկտեմբեր 2017ին Արցախի Հանրապետութեան Գանձասար վանական համալիրում գորգերի օրհնման եւ եկեղեցուն յանձնման արարողութիւնից

Արցախի նախագահի նստավայրում հայկական գորգերի նուիրաբերում

Մեգերեան ընտանիքի ամենագեղեցիկ գորգերից գտնւում էր նաեւ Արցախի նախագահի նստավայրում: Դիզայնը բաղկացած է Արցախի մելիքների տոհմերի զինանշաններից:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Կարելի է ասել, որ ընկերութեան ՀՀ մուտքով շատ բան է փոխուել հայկական գորգի ու գորգարուեստի առնչութեամբ: Առաջին հերթին, հայկական գորգարուեստը լայն դռներով, նաեւ առեւտրական ուղիներով, մուտք գործեց միջազգային շուկայ՝ մրցունակ եւ յաղթական, գրաւելով իրեն արժանի հարթակը համաշխարհային գորգարուեստի համապատկերում: Միւս կողմից, հայ գորգարուեստը թարմացաւ, նոր շունչ առաւ ու նորովի մուտք գործեց ԻԱ. դար, դուրս գալով ներկայացման հնացած ձեւերից ու որդեգրելով ժամանակակից ճաշակի ու մատուցման միջոցներ, օգտուելով մերօրեայ մրցակցային նորագոյն արհեստամիջոցներից:

Իտես հայկական գորգի համաշխարհային վերելքին մէջ Մեգերեան կարպետի խաղացած դերին ու գնահատելով նաեւ «Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման եւ անցկացման աշխատանքներին ցուցաբերած գործուն աջակցութիւն»ը, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը Ռաֆֆի Յովհաննէսի Մեգերեանին պարգեւատրեց «Երախտագիտութեան մետալ»ով, 2015ին:

2019 Մարտի 28ին Երեւանի Ա. Խաչատրեանի անուան համերգասրհում տեղի ունեցաւ «Մերկուրի» միջազգային մրցանակաբաշխութիւնը: Այդ շրջանակում Մեգերեան կարպետ ընկերութեան նախագահ Ռաֆֆի Մե-

գերեանին տրուեց շնորհակալագիր «Մերկուրի» միջազգային մրցանակաբաշխութեան կազմակերպմանն աջակցելու համար[1]:

2 Հոկտեմբեր 2017ին ՀՀ Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրէն Կարայեանը եւ նախարարութեան զբօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահ Զարմինէ Զէյթունցեանը՝ զբօսաշրջութեան բնագաւառում ներդրած նշանակալի աւանդի համար Մեգերեան ընկերութիւնը պարգեւատրեցին Հայաստանի Հանրապետութեան տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարութեան ոսկէ մեդալով:

Իսկ 30 Հոկտեմբերի 2017ին, ընկերութեան նախագահ Ռաֆֆի Մեգերեանը պարգեւատրուել է նաեւ «Փառապանծ մարտիկ» մեդալով եւ պատուոգրով՝ բանակաշինութեան եւ պետականաշինութեան գործին նպաստելու եւ բազում աշխատատեղեր ստեղծելու առիթով, միջազգային ոստիկանական ընկերակցութեան հայաստանեան կառոյցի եւ ոստիկանութեան ռազմականացուած ջոկատի՝ ՕՄՕՆի վետերանների միութեան նախագահ, ազատամարտիկ գնդապետ Գրիշա Սարգսեանի կողմից:



Հայկական աւանդական գորգին հանգոյցը, ծանօթ՝ զոյգ հանգոյց (double knot), ինչպէս եւ Կիորտէս անունով: Այս հանգոյցը աւելի տոկուն եւ դիմացկուն կը դարձնի գորգը

[1] Այն կազմակերպւում է 2006ից, ՀՀ առեւտրաարդիւնաբերական պալատի կողմից, եւ կոչուած է խրախուսել հայկական կազմակերպութիւններին եւ անհատներին, ստեղծել խթան՝ տարէցտարի իրենց արտադրանքի ու ծառայութիւնների որակն աւելի բարելաւելու համար:

Նմուշներ՝ Յովհաննէս եւ Նոյեմի Մեգերեանների անուան թանգարանի գորգերից

«Ջրաբերդ», 1906, Արցախ

«Վահանագորգ», ԺԹ. դարավերջ, Սասուն

«Մեղու», Ի. դարասկիզբ, Արեւելեան Հայաստան

«Վահանագորգ», 1860ականներ, Արեւմտեան Հայաստան

STEPS TAKEN BY MEGERIAN CARPET CO. FOR THE REVIVAL OF THE ARMENIAN RUG
(SUMMARY)

HASMIK SAYADYAN
hasmik.sayadyan93@gmail.com

The paper outlines the outstanding work the Megerian Carpet company has initiated in the Republic of Armenia

Originally from Chomaklu, the Megerians founded their company in 1917 in New York as an antique rug selling and repairing company. After the proclamation of independence of Armenia, the company established a branch in Armenia, with the intention of promoting the Armenian rug ion the world market.

In 2002 the company bought Haygorg, the old Soviet Armenian rug factory in Yerevan, and made it its Armenia headquarters. This step gave the company further impetus to restore old Armenian rug-weaving traditions like the usage of Armenian knots, the dying of the wool using natural materials including plants and other natural dyes, fixing the color of the dye on the wool, and matching the density of the knots to the number of knots in a square centimeter in ancient Armenian rugs. The company set up branches in different regions and towns of the Republic. These were to be further enlarged had there not been the Covid 19 setback and international market crises.

Furthermore, the company produced copies of a number of renowned old Armenian rugs and designed and created new sets of Armenian rugs inspired by Armenian history. The company produced new versions of the oldest rug, the Pazyrik. The company toiled, strategized, promoted and marketed the Armenian rug on the world rug market with 21st century marketing methods, making it competitive and in demand.

Moreover, the company has developed an extensive social outreach program, whereby it campaigns for philanthropic and humanitarian support from different circles of Armenian society as well as cultural centers through fundraisings and auctioning several of its new, original and unique rugs.